

## ԳԼՈՒԽ 5. ՊԱՏՄԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐԸ

Հատուցումներին վերաբերող օրենքները, թվում է, հիմնված են մի մոդելի վրա, որով որևէ խմբի անդամ հանդիսացող զոհերը հատուցումները ստանում են անհատապես՝ կոնկրետ կորուստների համար: Ֆինանսական փոխհատուցումների առումով արմատական տարբերություն չի դրվում անհատական և խմբային հատուցումների միջև: Թեև, երբ միջոցները հատկացվում են խմբի քաղաքական և հանրային ինստիտուտներին, դրանք ավելի պատրաստակամորեն են օգտագործվում ընդհանուր առմամբ խմբին օժանդակող մեծ ծրագրերի համար և դրանց օգտագործման վերաբերյալ ավելի արդարացի որոշումներ են կայացվում, այդուհանդերձ, եթե այդ միջոցներն անհատական վճարների տեսքով հատկացվեն հայ համայնքին, այդ դեպքում նույնպես դրանք կարող են ի վերջո նպաստել հայերի վերականգնմանը և հետագա կենսունակությանը: Սակայն այլ է տարածքի հարցը: Հսկայական և արմատական տարբերություն կա, երբ հողը վերադարձվում է անհատ սեփականատերերին, միաժամանակ մնալով հանցագործ խմբի քաղաքական, հասարակական և մշակութային կառույցների շրջանակներում, և հողի քաղաքական փոխանցման միջև: Զեկույցի այս բաժնում կքննարկվեն հետևյալ հարցերը՝ 1) ունեն, արդյոք, հայերը հողի քաղաքական փոխանցման հավաքական պահանջի իրավունք, և 2) եթե այո, ապա ինչ հիմքով:

Նշենք, որ հողի և այլ գույքի վերադարձի հարցերում կազմակերպությունները կարող են դիտարկվել իբրև իրավաբանական անձ: Ինչպես նշվեց նախորդ հատվածում՝ հայ առաքելական, բողոքական և կաթոլիկ եկեղեցիները կարող են պահանջներ ներկայացնել Յեղասպանության ընթացքում բռնագրավված հողի և գույքի նկատմամբ: Ավելին, վերջին դատական գործերը և օրենքների որոշ տարրեր ցույց են տալիս, որ հայցերում կարող են ներառվել նաև համայնքային կազմակերպություններին և անգամ զոհ խումբը ներկայացնող պետությանը հատուցումներ տալու պահանջներ: Օրինակ՝ *Նյու Յորք Լայֆի* վճարած փոխհատուցման մի զգալի մասը տրամադրվեց Սփյուռքի հայկական կազմակերպություններին, որոնք աշխատում են ի նպաստ Սփյուռքի հայ համայնքների բարեկեցության:<sup>194</sup> Այս մոտեցումը պետք է տարածվի նաև հողային պահանջների վրա:

Հողերի քաղաքական փոխանցման հարցում պետք է ներառվի մի լրացուցիչ կոնցեպտ ևս՝ «պատմական արդարություն» հասկացությունը: Հայերը հազարամյակներով բնակվել են Փոքր Ասիայի արևելյան հատվածում,<sup>195</sup> որը «Հայաստան» էր ընկալվում թե՛ հայկական պետությունների, և թե՛ օտար նվաճողների կողմից:<sup>196</sup> Յեղասպանության զխավոր նպատակներից մեկն այդ տարածքի հայության բնաջնջումն էր, տարածքը «թուրքականացնելու» և հայերի ներկայությունը վերացնելու նպատակով:<sup>197</sup> Թեև փաստերը վկայում են, որ Յեղասպանությունից առաջ և դրա ընթացքում չկար հայկական լուրջ անջատողական շարժում,<sup>198</sup> այն, որ երիտթուրքերի

194 Stu` Weinstein, “Insurer Settles Armenian Genocide Suit” (տես հղում 2).

195 Կիլիկիայի հարցը այս բաժնում դուրս է թողնված ընդհանուր տարածքային պահանջատիրության հարցից, և դրան անդրադարձ կարվի զեկույցի հետագա հատվածներում

196 Hovannisian, “The Historical Dimensions,” էջ 19-20 (տես հղում 62).

197 Stu, օրինակ՝ “The Armenian Genocide,” p. 132 (see Note 180); Uğur Ümit Üngör, “Seeing Like a Nation-State: Young Turk Social Engineering in Eastern Turkey, 1913-50,” *Journal of Genocide Research* 10:1 (2008): 15-39 at 20-21, 26-27.

198 Melson, *Revolution and Genocide*, p. 157 (տես հղում 151); Dikran Kaligian, *Armenian Organization and Ideology under Ottoman Rule: 1908-1914* (New Brunswick, NJ, USA: Transaction Publishers, 2009); Henry C. Theriault, “Rethinking Dehumanization in Genocide,” in Richard Hovannisian (ed.), *The Armenian Genocide: Cultural and Ethical Legacies* (New Brunswick, NJ, USA: Transaction Publishers, 2007), էջ 27-40 at 34-35.

առաջնորդները փորձում էին Ցեղասպանությունն արդարացնել անջատողականությամբ,<sup>199</sup> և նույն բանն անում էին նաև հետագա ժխտողները,<sup>200</sup> ցույց է տալիս, որ թե՛ իրենք, թե՛ մյուսներն ընկալում էին այդ հողերի երկարատև պատմական կապը հայերի հետ, և ընդունում էին, որ այդտեղ հայերի հոծ բնակչություն է եղել:

Այդուհանդերձ, պատմական արդարությունը կարիք ունի լրացուցիչ հիմնավորման, հատկապես այն դեպքերում, երբ տարածքները վաղ անցյալից բնակեցված են եղել, և այնտեղ բնակվել են տարբեր խմբեր: Ծայրահեղական մոտեցումներից մեկն այն է, որ պատմական պահանջատիրությունն ինքնին անհիմն է, քանի որ տարածքի նկատմամբ նախորդ խմբի հավակնությունը վիճելի է: Խնդիրը հատկապես բարդանում է, երբ երկարատև պատմությունը և թերի փաստագրումները մթագնում են պատմությունը: Արդյո՞ք այդ խումբ ինքն էլ մինչև այդ ուրիշներին չի հասնել այդ տարածքներից: Զոհերի խումբը չի շահել այդ տարածքը ավելի մեծ պետական միավորին միացնելուց: Եվ այսպես շարունակ: Տարածքի նկատմամբ պատմական հավակնություններն առաջացնում են բազմաթիվ հակասական տեսակետեր, թե ի վերջո ո՞ր խմբին կամ խմբերին է պատկանում տարածքի նկատմամբ պատմական իրավունքը:<sup>201</sup>

Այդուհանդերձ, բազմաթիվ այլ տարածքային պահանջների համեմատ հայկական պահանջատիրությունը շատ ավելի հիմնավոր է, որովհետև այդ տարածքն ավելի քան երկու հարյուր տարի ճանաչվել է որպես հայկական տարածք: Թերևս հենց սա էր պատճառը, որ նույնիսկ երիտթուրքերին հաջորդած կառավարությունն էր պատրաստ Հայոց ցեղասպանության առաջին փուլից (1915-1918) անմիջապես հետո ճանաչել Հայաստանի Հանրապետության սահմանները, որոնցում ընդգրկվել էր «պատմական Հայաստանի» այդ տարածքը: Իրավական մեխանիզմներով ամրագրված հենց այդ ճանաչումն է, որ այսօր օրինականություն է հաղորդում իրենց պատմական տարածքների նկատմամբ հայերի պահանջատիրությանը:

Հարկ է անդրադառնալ տարածքի վերաբերյալ իրավարար վճռի որոշ կետերի: Նախ՝ Հայաստանի Հանրապետությանը հատկացվող կոնկրետ տարածքը (որը, ստորև բացատրվող պատճառներով հայտնի է որպես «Վիլսոնյան Հայաստան») կազմված էր այնպես, որ այն ապահովեր առաջին հանրապետության կենսունակությունը, և այն հանդիսանար այն պետությունն ու հասարակությունը, որտեղ հայ ժողովուրդը Ցեղասպանությունից հետո վերականգնվելու հնարավորություն կունենար:<sup>202</sup> Հետևաբար՝ տարածքի հատկացումը մինևնույն ժամանակ հանդիսանում էր Ցեղասպանության հասցրած վնասների համար հայ ժողովրդին հատկացվող հատուցում: Եվ երկրորդ՝ իրավարար վճռի կայացումից հետո, երբ Հայաստանի Հանրապետությունը զբաղեցնում էր հատկացված տարածքի միայն մի մասը, 1920-ին Քեմալ Աթաթուրքի ազգայնամոլ ուժերը, որոնք միայն երեք տարի անց պիտի հիմնադրեին Թուրքիայի Հանրապետությունը, բռնազավթեցին հատկացված տարածքները, և Խորհրդային Ռուսաստանի մասնակցությամբ վերջ դրեցին Հայաստանի Հանրապետության անկախությանը:<sup>203</sup> Հետևաբար՝ Աթաթուրքի զավթած տարածքի նկատմամբ թուրքերի հավակնությունը հավակնություն է այն տարածքի նկատմամբ, որ մինչև այդ արդեն տրվել էր

199 Տես, օրինակ՝ Morgenthau, *Ambassador Morgenthau's Story*, pp. 223, 229-230 (տես հղում 62)։

200 Այս երևույթի վերլուծությունը տես, օրինակ՝ Dikran Kaligian, “Anatomy of Denial: Manipulating Sources and Manufacturing a Rebellion,” *Genocide Studies International* 8:2 (2014): 208-223.

201 Տես՝ Janna Thompson, *Taking Responsibility for the Past: Reparation and Historical Justice* (Cambridge, UK: Polity Press, 2002), էջ 57.

202 Տես բաժիններ 5.3.1, 5.3.2 և 5.3.4

203 Hovannisian, “The Historical Dimensions” էջ 36, (տես հղում 62)։

հայերին ու հետո հետ վերցվել այն վարչակազմի կողմից, որոնք պիտի հիմնադրեին Թուրքիայի Հանրապետությունը:

Թեև նվաճումների պատմությունը, ցեղասպանության միջոցով հայ բնակչության բնաջնջման փաստը և պատմականորեն հայերին պատկանելը հիմնավորում են այդ տարածքի նկատմամբ պահանջատիրությունը, սակայն պահանջն էլ ավելի ուժեղ և անվիճելի կլինի, եթե հաստատվի, որ Ցեղասպանության առաջին փուլից հետո Հայաստանի Հանրապետությանը հատկացված տարածքի վերաբերյալ իրավարար վճիռն օրինական էր կայացման ժամանակ, և որ այն ուժը չի կորցրել այսօր: Զեկույցի հետագա հատվածները վերաբերում են հենց այդ հարցերին:

## 5.1 ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Ցեղասպանության հանցագործությունը (ինչպես էլ այն անվանվեր՝ «ոչնչացում», «տարհանում», «գանգվածային սպանություններ», «բնաջնջում», կամ «կոտորածներ») պատժելու պարտավորությունը և փրկվածներին ու զոհերին փոխհատուցում տալու պարտավորությունն արդեն նախատեսված էին Առաջին համաշխարհային պատերազմում հաղթած Դաշնակից երկրների և Օսմանյան կայսրության միջև 1920թ. օգոստոսի 20-ին կնքված Սևրի խաղաղության պայմանագրում: Պայմանագրով նախատեսված էր Օսմանյան Թուրքիայի պաշտոնյաներին դատելու պարտավորություն՝ թե՛ այն հանցագործությունների համար, որ նրանք գործել էին Դաշնակիցների քաղաքացիների դեմ,<sup>204</sup> և թե՛ այն հանցագործությունների համար, որ Օսմանյան կայսրության իշխանությունները գործել էին այլազգի հպատակների, հատկապես հայերի դեմ: Այդ հանցագործություններն այսօր կոչվում են ցեղասպանություն, իսկ ավելի լայն իմաստով՝ «մարդկության դեմ ուղղված հանցագործություններ»:

Այսպես՝ համաձայն Սևրի Պայմանագրի 230-րդ հոդվածի՝<sup>205</sup>

«Թուրքական կառավարությունը պարտավորվում է Դաշնակից տերություններին հանձնել այն անձանց, ովքեր պատասխանատու են այն կոտորածների համար, որոնք պատերազմական դրության ընթացքում տեղի են ունեցել այն տարածքներում, որոնք 1914թ. օգոստոսի 1-ի դրությամբ պատկանում էին Թուրքական կայսրությանը: Դաշնակից տերություններն իրենց իրավունք են վերապահում որոշելու, թե որ դատարանում կդատվեն այդ անձինք, իսկ Թուրքիայի կառավարությունը պարտավորվում է ճանաչել այդ դատարանի իրավասությունը...»

Սևրի պայմանագրում կար նաև արդարացի ռեստիտուցիայի սկզբունքը, որն ամրագրված էր 114-րդ հոդվածում.

Թուրքական կառավարությունը ճանաչում է 1915թ-ի՝ Լքված գույքի մասին օրենքի (Emval-I-Metroukeh) և դրա լրացուցիչ դրույթների անարդարացիությունը, և հայտարարում դրանք առոչինչ՝ ինչպես անցյալում, այնպես էլ ապագայում: Թուրքիայի կառավարությունն ազնվորեն պարտավորվում

204 Հատկապես ցամաքային պատերազմի մասին 1907-ի Հաագայի կոնվենցիայի խախտումները (տես հղում 104).

205 Տես հղում 85.

է անել հնարավորը, որպեսզի Թուրքիայի ազգությամբ ոչ թուրք այն հպատակները, ովքեր կոտորածների կամ այլ ճնշումների ահից 1914թ. հունվարի 1-ից ի վեր բռնի տեղահանվել են իրենց տներից, կարողանան վերադառնալ իրենց տները և զբաղվեն իրենց նախկին աշխատանքով: Թուրքիայի կառավարությունը համաձայնում է վերոնշյալ հպատակներին կամ նրանց համայնքներին հնարավորինս արագ կերպով վերադարձնել այն ամբողջ անշարժ և շարժական գույքը, որը հնարավոր է հայտնաբերել, անկախ նրանից, թե ով է ներկայումս այդ գույքը տնօրինում ... Թուրքիայի կառավարությունը համաձայնում է, որ Ազգերի Լիգայի խորհուրդը, անհրաժեշտության դեպքում, կստեղծի արբիտրալ հանձնաժողովներ, որոնք կքննեն սույն հոդվածով նախատեսված հայցերը և արագացված ընթացակարգերով որոշումներ կկայացնեն»:

Թեև Թուրքիան ստորագրեց Սևրի պայմանագիրը, բայց այդպես էլ այն չվավերացրեց: Իրենց հերթին Դաշնակիցներն էլ չգործադրեցին պայմանագիրը կյանքի կոչելուն ուղղված անհրաժեշտ քաղաքական և տնտեսական ճնշում Թուրքիայի վրա:<sup>206</sup> Դրա պատճառներն էին՝ Առաջին համաշխարհային պատերազմին հաջորդած միջազգային քաղաքական խառնաշփոթը, Խորհրդային Ռուսաստանի առաջացումը, Թուրքիայից բրիտանական ռազմական ուժերի հեռանալը,<sup>207</sup> ԱՄՆ-ի որդեգրած մեկուսացման քաղաքականությունը,<sup>208</sup> երիտթուրքերի վարչակազմի անկումը և Թուրքիայում քեմալականության ծնունդը: Այդպես էլ երբեք չստեղծվեց 230-րդ հոդվածով նախատեսված միջազգային քրեական դատարանը: Չստեղծվեցին նաև 144-րդ հոդվածով նախատեսված արբիտրալ հանձնաժողովները:

Քեմալական Թուրքիայի և Դաշնակիցների (Բրիտանիա, Ֆրանսիա, Իտալիա, Ճապոնիա, Հունաստան և Ռումինիա) միջև հետագայում կնքվեց նոր պայմանագիր՝ 1923թ. հուլիսի 4-ի Լոզանի պայմանագիրը: Սակայն այդ պայմանագիրը չվերահաստատեց Սևրի Պայմանագրի դրույթները՝ դատել և պատժել հայերի ցեղասպանության պատասխանատուներին, հատուցումներ տալ Ցեղասպանությունից փրկվածներին և ճանաչել ազատ հայկական պետությունը (Բաժին VI, Հոդվածներ 88-93): Հայաստանն անկախ էր հռչակվել 1918թ. մայիսի 28-ին, բայց մի քանի տարի անց Արևմտյան Հայաստանն անցավ Թուրքիային, իսկ Արևելյան Հայաստանում Կարմիր բանակի օգնությամբ հաստատվեց կոմունիստական իշխանություն, և այն մտավ Խորհրդային Միության կազմի մեջ:

206 André N. Mandelstam, *La Société des Nations et les puissances devant le Problème Arménien*, 2<sup>nd</sup> ed. (Beirut, Lebanon: Éditions universitaires arméniennes, 1970).

207 Paul Helmreich, *From Paris To Sévres: The Partition of the Ottoman Empire at the Peace Conference of 1919-1920* (Columbus, OH, USA: Ohio State University Press, 1974), էջ 131-152.

208 Թեև ամերիկյան դիվանագետներն դեռևս 1915-ին դատապարտել էին Ցեղասպանությունը, ամերիկյան կառավարությունը որևէ քայլ չկատարեց պատերազմից հետո անարդարությունն ուղղելու համար: Արժե հիշել, որ ԱՄՆ դեսպան Հենրի Մորգենթաուն կոտորածներն անվանել էր «ցեղի սպանություն» և որ 1915-ի հուլիսի 10-ին նա Վաշինգտոն հեռագիր էր ուղարկել Օսմանյան քաղաքականության մասին հետևյալ նկարագրությամբ՝ «Հայերի սպանությունները հասել են աննախադեպ չափերի: Տարբեր շրջաններից հասնող տեղեկությունները ցույց են տալիս, որ իրականացվում են հայ խաղաղ բնակչության սիստեմատիկ ոչնչացում, և կամայական ձերբակալությունների, ահավոր խոշտանգումների, տեղահանության ու կայսրության մի ծայրից մյուսը գաղթեցնելու միջոցով, որոնք ուղեկցվում են հաճախակի բռնաբարություններով, սպանություններով, կոտորածներով, փորձ է արվում ոչնչացնել նրանց: Այս քայլերը չեն կատարվում ի պատասխան ժողովրդական ֆանատիկ պահանջի, դրանք կատարվում են կամայականորեն և թելադրվում են Կոնստանդնուպոլսից՝ ռազմական անհրաժեշտության անվան տակ, հաճախ այնպիսի շրջաններում, որտեղ ռազմական գործողությունների հավանականություն չկա»: (Power, “A Problem from Hell,” էջ 6 [տես հոդում 15])

Հարկ է նշել, որ 1915թ. մայիսի 24-ին, դեռևս մինչև Սևրի պայմանագիրը, Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի կառավարությունները համատեղ հայտարարություն էին արել՝ դատապարտելով Օսմանյան կայսրության կառավարության կողմից իրականացվող հայկական կոտորածները, անվանելով դրանք «մարդկության և քաղաքակրթության դեմ ուղղված հանցագործություններ», որոնց համար «պատասխանատվության կենթարկվեն Թուրքիայի կառավարության բոլոր անդամները և կոտորածների իրագործողները»:<sup>209</sup>

## 5.2 ՄԵՎՐԸ ԵՎ ԼՈՋԱՆԸ

Ըստ տարածված կարծիքի՝ 1923թ. Լոզանի պայմանագիրը եկավ փոխարինելու 1920թ. Սևրի պայմանագրին: Այս տեսակետը մասամբ հիմնված է այն փաստի վրա, որ Սևրի պայմանագիրն այդպես էլ չիրագործվեց, իսկ դրան հաջորդած Լոզանի պայմանագիրը սահմանեց նոր կարգ այդ տարածաշրջանի, և հատկապես Թուրքիայի, համար: Թեև Սևրի պայմանագիրն այդպես էլ ուժի մեջ չմտավ, այդուհանդերձ այն ստորագրել էին «Պայմանավորվող Բարձր Կողմերը», որոնք այն պետություններն են, որ պարտավորվում են ենթարկվել պայմանագրի դրույթներին անկախ պայմանագիրը ուժի մեջ մտնել-չմտնելուց:<sup>210</sup> Հետևաբար՝ պայմանագրի տեքստը իսկական և վերջնական էր, քանի որ կազմվել և ստորագրվել էր պայմանագրի կողմ հանդիսացող երկրների լիազոր ներկայացուցիչների կողմից, և պայմանագրի բոլոր կողմերը, այդ թվում թուրքական պետությունը, համաձայնել էին ենթարկվել պայմանագրին՝ անկախ պայմանագիրը ուժի մեջ մտնել-չմտնելուց: Պայմանավորվող Բարձր Կողմերի միջև կնքվող պայմանագրի պարտադիր լինելը պարզաբանված է Պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի կոնվենցիայի (Vienna Convention on the Law of Treaties, 1969) 2-րդ հոդվածի 6-րդ պարբերությունում<sup>211</sup> և Պայմանագրերի նկատմամբ պետությունների իրավահաջորդության մասին Վիեննայի կոնվենցիայի (Vienna Convention on Succession of States in respect of Treaties, 1978) 2-րդ հոդվածի 11-րդ պարբերությունում:<sup>212</sup> Ըստ միջազգային իրավունքի նորմերի՝ Սևրը «անկատար պայմանագիր է»,<sup>213</sup> բայց այն, այդուհանդերձ, եղել և մնում է իրավական ուժ ունեցող փաստաթուղթ:

Պայմանագրերը կարող են փոփոխվել, դադարեցվել կամ հետ կանչվել միայն կողմերի համաձայնությամբ՝ համաձայն պայմանագրում նշված ընթացակարգի կամ Պայմանագրերի օրենքի մասին 1969թ. Վիեննայի կոնվենցիայում նշված միջազգային իրավունքի ընդունված նորմերի:<sup>214</sup> Ինչպես արդեն նշվեց իրավական վերլուծությունում, թեև Վիեննայի կոնվենցիայի 4-րդ հոդվածը սահմանում է, որ կոնվենցիան հետադարձ ուժ չունի, այդուհանդերձ այն կանոնները, որոնք վերաբերում են միջազգային իրավունքի ընդունված նորմերին, գործում են կոնվենցիան ուժի մեջ մտնելուց առաջ ստորագրված պայմանագրերի համար:<sup>215</sup> Համաձայն Վիեննայի կոնվենցիայի 40

209 U.S. National Archives, Record Group 59, 867.4016.67 (տես հղում 125): Տես նաև՝ EgonSchwelb, “Crimes Against Humanity,” *British Yearbook of International Law* 23:1 (1946): 178-226 at 181.

210 Ինչպես ամրագրված է 1969թ. Պայմանագրերի մասին Վիեննայի կոնվենցիայի հոդված 2 (1) (f) (տես հղում), «պայմանավորվող պետությունը այն պետությունն է, որը համաձայնել է պայմանագրին ենթարկվել՝ անկախ դրա ուժի մեջ մտնելու կամ չմտնելու հանգամանքից»:

211 Պայմանագրերի մասին Վիեննայի կոնվենցիա (տես հղում 140)

212 Պայմանագրերի ամսյուրայն պետությունների իրավահաջորդության մասին Վիեննայի կոնվենցիա, 1978թ, օգոստոսի 23; Treaty Series, Vol. 1946, p. 3, [http://legal.un.org/ilc/texts/instruments/english/conventions/3\\_2\\_1978.pdf](http://legal.un.org/ilc/texts/instruments/english/conventions/3_2_1978.pdf) (accessed October 13, 2014).

213 Այս իրավաբանական տերմինով անվանվում են այն պայմանագրերը, որոնք չեն վավերացվել ստորագրող պետությունների կողմից

214 United Nations, *Final Clauses of Multilateral Treaties: Handbook* (New York, NY, USA: United Nations, 2003), p. 95.

215 Anthony Aust, *Modern Treaty Law and Practice* (Cambridge, UK: Cambridge University Press, 2000), էջ 8.

(2) հողվածի՝ բազմակողմ պայմանագրերում փոփոխություններ կարող են արվել միայն պայմանագրի բոլոր կողմերի համաձայնությամբ.

«Բազմակողմ պայմանագրերում փոփոխություններ մտցնելու յուրաքանչյուր առաջարկի մասին պետք է տեղյակ պահվեն բոլոր կողմ-պետությունները, որոնցից յուրաքանչյուրն իրավունք ունի մասնակցելու՝ ա) այդ փոփոխությունից բխող գործողությունների վերաբերյալ որոշումների կայացմանը, բ) պայմանագրում փոփոխություններ մտցնելու մասին բանակցություններին և վերջնական տարբերակի կնքման գործընթացին»<sup>216</sup>

Լոզանի կոնֆերանսը չի կարող համարվել Սևրի պայմանագրում փոփոխություններ մտցնելու գործընթաց, որովհետև պայմանագրի կողմ հանդիսացող պետություններին փոփոխություններ անելու պաշտոնական ծանուցումներ չէին ուղարկվել: Սևրի պայմանագիրը ստորագրած 13 պետություններից (Հայաստան, Բելգիա, Բրիտանական կայսրություն,<sup>217</sup> Չեխոսլովակիա, Ֆրանսիա, Հունաստան, Իտալիա, Ճապոնիա, Լեհաստան, Պորտուգալիա, Ռումինիա, Սերբա-խորվաթա-սլովենական պետություն և Թուրքիա) Լոզանի պայմանագիրը ստորագրել են միայն 7-ը (Բրիտանական կայսրություն, Ֆրանսիա, Հունաստան, Իտալիա, Ճապոնիա, Ռումինիա և Թուրքիայի Մեծ Ժողովի կառավարությունը): Լոզանի պայմանագիրը չէր կարող փոփոխել Սևրի պայմանագիրը, քանի որ Սևրի պայմանագիրը կնքած ոչ բոլոր կողմերն էին մասնակցում Լոզանի պայմանագրին:

Ավելին, Լոզանի պայմանագիրը չուներ, և հիմա էլ չունի, իրավական ուժ այն պետությունների, այդ թվում Հայաստանի համար, որոնք լինելով Սևրի պայմանագրի կողմեր, միևնույն ժամանակ Լոզանի պայմանագրի կողմեր չէին: Հետևաբար՝ Լոզանի պայմանագիրն այդ երկրների համար չէր սահմանում ո՛չ պարտավորություններ, ո՛չ էլ իրավունքներ (1969թ. Վիեննայի կոնվենցիա, հոդված 34): Իսկ ավելի կոնկրետ՝ Լոզանի պայմանագրից չի հետևում, թե Հայաստանը համաձայնել է հրաժարվել ֆինանսական հատուցումներից, կամ ճանաչել է Թուրքիայի հետ իր նոր սահմանները: Հայաստանի համար Լոզանի պայմանագրի օրինական ուժ չունենալն արտացոլված է Սևրում Հայաստանի Հանրապետության պատվիրակության նախագահ Ավետիս Ահարոնյանի՝ Դաշնակից տերությունների արտաքին գործերի նախարարներին հասցեագրված 1923թ. օգոստոսի 8-ի նամակում.

«Հայաստանի անունից Սևրի պայմանագիրը ստորագրած պատվիրակությունը պնդում է այն բոլոր իրավունքները, որոնք տերությունները հանդիսավոր կերպով ճանաչել էին պատերազմի ժամանակ և դրանից հետո, և որոնք իրենց ճշգրիտ մարմնացումն էին ստացել Սևրի պայմանագրում, իսկ հետո նաև վերահաստատվել հաջորդ կոնֆերանսների որոշումներում»:<sup>218</sup>

216 Բրիտանական կայսրության կողմից ստորագրողները հանդես էին գալիս առանձին-առանձին՝ Մեծ Բրիտանիայի և Իռլանդիայի Միացյալ Թագավորությունը, Կանադան, Ավստրալիան, Նոր Զելանդիան, Հարավային Աֆրիկան և Հնդկաստանը

217 “Armenia Denounces Lausanne Treaty; Note to the Powers Formally Reserves All Grants Under the Treaty of Sevres,” *New York Times*, September 12, 1923, էջ 30.

218 Լոզանի պայմանագիրը ստորագրվել է 1923թ. հուլիսի 4-ին, իսկ Թուրքիայի Հանրապետությունը հռչակվել է 1923թ. հոկտեմբերի 29-ին: Տե՛ս՝ “Proceedings of the Opening and Public Session of the Near East Peace Conference, held at the Casino de Montbenon, Lausanne, November 20, 1922, at 3:30 p.m.,” *Lausanne Conference on Near East Affairs, 1922-1923: Records of Proceedings and Draft Terms of Peace* (London, UK: His Majesty’s Stationery Office, 1923), էջ 1-14 at 4, 8

Ինչ վերաբերում է պայմանագրի գործողության դադարեցմանը կամ դրանից դուրս գալուն, ապա դրանք նույնպես կարելի է կատարել միայն բոլոր կողմերի համաձայնությամբ (1969թ. Վիեննայի կոնվենցիա, հոդված 54): Սա նշանակում է, որ Թուրքիան առանց մյուս կողմերի, այդ թվում Հայաստանի համաձայնության չէր կարող միակողմանիորեն ինքն իրեն ազատել Սևրի պայմանագրով իր վրա դրված պարտավորություններից: Իսկ նման համաձայնություն չէր տրվել: Լոզանի պայմանագրում նման համաձայնության ակնարկ իսկ չկա, և չէր էլ կարող լինել:

Մի կարևոր հանգամանք ևս. բացի այն, որ այս երկու պայմանագրերը ստորագրողները ճիշտ նույն երկրները չէին, բոլորովին տարբեր էին նաև երկու պայմանագրերից յուրաքանչյուրում ընդգրկված հարցերի շրջանակները, նպատակները և համատեքստը, ինչը մեկ անգամ ևս ապացուցում է, որ Լոզանի պայմանագիրը չէր հանդիսանում, և չէր էլ կարող հանդիսանալ Սևրի պայմանագրի փոփոխված տարբերակը:

Առաջին. ինչպես արդեն նշվեց, Սևրի պայմանագիրը կնքվել էր «Բարձր Պայմանավորվող Կողմերի» միջև, այսինքն՝ պետություններ, որոնք պարտավորվում են ենթարկվել պայմանագրի դրույթներին՝ անկախ պայմանագիրը ուժի մեջ մտնել-չմտնելուց: Ի տարբերություն՝ Լոզանի պայմանագիրը չի կնքվել «պայմանավորվող պետությունների» միջև, ինչը նշանակում է, որ այն ուժի մեջ էր մտնելու միայն վավերացումից հետո:

Երկրորդ. Սևրի պայմանագիրը կնքվել է մի կողմից «Դաշնակից և ասոցացված տերությունների» (այսինքն՝ Առաջին համաշխարհային պատերազմի միջազգային դաշինքներից մեկի), իսկ մյուս կողմից՝ Թուրքիայի միջև:

Երրորդ. պայմանագրի նպատակն էր ավարտին հասցնել Առաջին համաշխարհային պատերազմի Թուրքիային առնչվող մասը և խաղաղություն հաստատել: Ինչպես ասված էր նախաբանում՝

«Դաշնակից տերությունները, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն մասնակցել են Թուրքիայի դեմ պատերազմին, ցանկանում են, որ պատերազմը, որը սկսվեց նախկին Ավստրո-հունգարական կայսերական և թագավորական կառավարության՝ 1914թ. հուլիսի 28-ին Սերբիային պատերազմ հայտարարելով և Թուրքիայի կողմից դաշնակից տերությունների դեմ 1914թ. հոկտեմբերի 29-ին թշնամական գործողություններով, և որը վարում էր Գերմանիան իր դաշնակից Թուրքիայի հետ, փոխարինվի անուր, արդարացի և հարատև խաղաղությամբ»:

Իսկ Լոզանի գործընթացը վերաբերում էր 1919-1922թթ. հույն-թուրքական հակամարտությանը, և այն ստորագրվեց տարածաշրջանում շահեր ունեցող (և հակամարտությանն ուղղակիորեն կամ անուղղակիորեն մասնակցած) առանձին կողմերի միջև: Ինչ վերաբերում է ստորագրողներին, ապա թուրքական կողմը պայմանագրում անվանվում էր «Ազգային մեծ ժողովի կառավարություն», իսկ դա ո՛չ Օսմանյան կառավարության անմիջական իրավահաջորդն էր, ո՛չ էլ նորաստեղծ Թուրքիայի Հանրապետության կառավարությունը (Թուրքիայի Հանրապետությունը հիմնադրվեց Լոզանի պայմանագրից միայն երեք ամիս անց): Այդ կառավարությունը պարզապես ներկայացնում էր Քեմալ Աթաթուրքի ղեկավարած ռազմական կազմավորումը: Իր հերթին Լոզանի գործընթացի վերնագիրը՝ «Մերձավոր Արևելքի հարցերի վերաբերյալ Լոզանի կոնֆերանս, 1922-1923», ընդգծում էր այդ կոնֆերանսի հարցերի ավելի

նեղ շրջանակը: Շվեյցարական Կոնֆեդերացիայի նախագահ Ռոբերտ Հաաբի պաշտոնական բացման ելույթում նույնպես շեշտվում էր, որ կոնֆերանսի առարկան և նպատակը «Մերձավոր Արևելքում հակամարտությունը դադարեցնելն էր»,<sup>219</sup> այսինքն՝ «հույն-թուրքական պատերազմի» դադարեցումը:<sup>220</sup> Լոզանի պայմանագրի նախաբանն ընդգծում էր, որ պայմանագրի առարկան և նպատակը «1914-ից ի վեր Արևելքում տիրող պատերազմական վիճակը վերջնական ավարտին հասցնելն է»: Թեև սա կարող է ընկալվել, թե պայմանագիրը վերաբերում էր Առաջին համաշխարհային պատերազմին և հետագա հակամարտությանը, Հաաբի «վերջնական ավարտ» ձևակերպումը ցույց է տալիս, որ խոսքը 1919-1922թթ. իրադարձությունների մասին էր: Հետևաբար՝ Լոզանի պայմանագրի նպատակը Առաջին համաշխարհային պատերազմին և Հայոց Ցեղասպանության առաջին փուլին անդրադառնալը չէր, ո՛չ էլ այն նպատակ ուներ վերացնելու Բրիտանիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի 1915թ. մայիսի 24-ի հայտարարությունը, ըստ որի Թուրքիան պետք է պատասխանատվության ենթարկվեր հայերի և այլ փոքրամասնությունների նկատմամբ կատարած «մարդկության և քաղաքակրթության դեմ ուղղված հանցագործությունների» համար:<sup>221</sup>

Չնայած Հայաստանը Լոզանի պայմանագրի կողմ չէր և հետևաբար, ինչպես արդեն ասվեց, պայմանագիրը իրավական հետևանք չունեի Հայաստանի համար, այնուամենայնիվ, պայմանագրում կար մի դրույթ՝ 16-րդ հոդվածը, որն անուղղակիորեն հաստատում էր Հայաստանի Հանրապետության իրավունքն այն տարածքի վրա, որոնք ըստ Սևրի պայմանագրի դրույթների նշված էր ԱՄՆ նախագահ Վիլսոնի իրավարար վճռում (այդ տարածքը սովորաբար հայտնի է որպես «Վիլսոնյան Հայաստան»): Համաձայն 16-րդ հոդվածի՝

«Թուրքիան հրաժարվում է սույն պայմանագրում նշված սահմաններից դուրս գտնվող տարածքների և կղզիների նկատմամբ բոլոր իրավունքներից, բացառությամբ այն կղզիների, որոնց նկատմամբ սույն պայմանագրով ճանաչվում է Թուրքիայի տիրապետությունը. այդ տարածքների և կղզիների ապագան կորոշեն շահագրգիռ կողմերը... սույն հոդվածի դրույթները չեն արգելում ձեռք բերել հատուկ պայմանավորվածություններ այն սահմանակից երկրների հետ, որոնց հետ Թուրքիան արդեն ունի, կամ հետագայում կունենա, բարիդրացիական հարաբերություններ»:

Լոզանի պայմանագիրն ամրագրեց Թուրքիայի սահմանները Բուլղարիայի (հոդված 2 [1]), Հունաստանի (հոդված 2 [2]), Սիրիայի (հոդված 3 [1]) և Իրաքի հետ (հոդված 2 [1]), բայց այդ պայմանագրում ոչինչ չկար թուրք-հայկական սահմանի մասին: Հետևաբար՝ ըստ Լոզանի պայմանագրի 16-րդ հոդվածի՝ թուրք-հայկական սահմանի հարցում ուժի մեջ էր մնում Վիլսոնի իրավարար վճռով (տես ստորև) նախատեսված հատուկ կարգը:

Մինևույն ժամանակ, այն, որ Լոզանի պայմանագրում ոչինչ չէր ասվում թուրք-հայկական սահմանի կապակցությամբ, նշանակում էր, որ չէր նախատեսվում իրագործել Վիլսոնի իրավարար վճիռը: Պայմանագիրը, չանդրադառնալով այդ հարցին, փաստորեն ամրագրում էր գոյություն ունեցող իրավիճակը՝ Թուրքիայի կողմից Հայաստանի առաջին Հանրապետությունից ռազմական ուժով Վիլսոնյան Հայաստանի բռնազավթումը: Այս հանգամանքը չվրիպեց ԱՄՆ Մե-

219 Նույն տեղում, էջ 1

220 Նույն տեղում, էջ 2

221 U.S. National Archives, Record Group 59, 867.4016.67 (տես հղում 125).



նաստի ուշադրությունից, որը հրաժարվեց վավերացնել 1923թ. օգոստոսի 6-ին Լոզանում կնքված Ամերիկա-թուրքական բարեկամության և առևտրի պայմանագիրը: «Մի քանի շաբաթ տևած բռն քննարկումներից հետո» 1927թ. հունվարի 18-ին ԱՄՆ Սենատը մերժեց պայմանագիրը:<sup>222</sup> Դեմոկրատական կուսակցության՝ պայմանագրի տապալումից հետո արած հայտարարությունն ասում էր, որ պայմանագիրը մերժվել է երեք պատճառով, որոնցից առաջինը հայկական հարցն էր: Այսպես՝ (1) «պայմանագրում նախատեսված չէր Հայաստանի վերաբերյալ Վիլսոնի վճռի իրականացում», (2) «պայմանագրում չկային քրիստոնյաների և այլ ոչ մահմեդականների պաշտպանության երաշխիքներ», (3) «պայմանագրում չէր նախատեսվում, որ թուրքերը պետք է ճանաչեն նախկին թուրքահպատակների ամերիկյան քաղաքացիությունը»:<sup>223</sup>

Սևրի պայմանագրի կիրառելիությունն այսպանով չի ավարտվում: Եթե անգամ այն լրանշակված, դադարեցված կամ չեղյալ հայտարարված լիներ, կամ կողմերից մեկը օրինական կերպով դուրս եկած լիներ, նույնիսկ այդ դեպքում, ըստ 1969թ. Վիեննայի կոնվենցիայի 43-րդ հոդվածի, դա «որևէ կերպ չի վերացնում միջազգային իրավունքի նորմերով նախատեսված պայմանագրային պարտավորությունները կատարելու պետության պարտականությունը»: Սևրի պայմանագրի այն դրույթները, որոնք վերաբերում էին հայ-թուրքական սահմանի որոշմանը և ֆինանսական փոխհատուցմանը, օրինական ուժ ունեին նաև պայմանագրի շրջանակից դուրս, քանի որ սահմանի որոշումն օրինականորեն սկսված իրավարար գործընթացի մաս էր, իսկ ֆինանսական ռեստիտուցիան համապատասխանում էր միջազգային իրավունքի նորմերին: Հետևաբար, անգամ եթե Սևրի պայմանագիրը փոփոխված, դադարեցված, կամ էլ չեղյալ հայտարարված լիներ (ինչը տեղի չի ունեցել), միևնույն է դա որևէ ազդեցություն չէր կարող ունենալ սույն զեկույցի գլխավոր առարկայի՝ հատուցումների պարտավորության վրա:

### 5.3 ՎԻԼՍՈՆԻ ԻՐԱՎԱՐԱՐ ՎՃԻՌԸ

Սևրի Պայմանագրի 89-րդ հոդվածով թուրք-հայկական սահմանի որոշման հարցը վերապահվում էր ԱՄՆ նախագահ Վիլսոնին: 89-րդ հոդվածը միջնորդ ատյանի դեր կատարելու խնդրագիր էր, և հետևաբար իրավարար վճիռը վավերացում չէր պահանջում, այն դեպքում, երբ ամբողջական պայմանագիրը պահանջում էր: Դեռևս մինչև Սևրի պայմանագիրը, 1920թ. ապրիլի 26-ի Սան Ռեմոյի կոնֆերանսի ընթացքում, Դաշնակից տերություններն արդեն նմանատիպ խնդրագիր ուղարկել էին նախագահ Վիլսոնին: Այն, որ ոչ թե մեկ, այլ երկու խնդրագիր է ուղարկվել, էլ ավելի է մեծացնում Վիլսոնի իրավարար վճռի ուժը:

Միջազգային հանրային իրավարարությունը (International Public Arbitration) երկրների միջև ծագած վեճերի կարգավորման արդյունավետ իրավական ընթացակարգ է:<sup>224</sup> Միջազգային իրավունքի հանձնաժողովի<sup>225</sup> (International Law Commission) 1953թ. զեկույցի համաձայն՝ իրավարարությունը երկրների միջև ծագած վեճերի կարգավորման այնպիսի ընթացակարգ է, որը նախատեսում է օրենքների հիման վրա կայացրած վճռի կամավոր ընդունում և պարտադիր կա-

222 “Democrats in Senate Kill Lausanne Treaty,” *Salamanca Republican Press*, January 19, 1927, էջ 5.

223 “Lausanne Treaty Is Defeated,” *The Davenport Democrat*, January 19, 1927, էջ 1.

224 Louis B. Sohn, “The Role of Arbitration in Recent International Multinational Treaties,” *Virginia Journal of International Law* 23:2 (1983): 171-189 at 171-172.

225 International Law Commission, “Report of the International Law Commission covering the work of its fifth session, 1 June-14 August 1953” (A/2436), in *Yearbook of the International Law Commission, 1953*, 2 vols., Vol. II, “Documents of the fifth session including the report of the Commission to the General Assembly” (New York, NY, USA: United Nations, 1959) (A/CN.4/SER.A/1953/Add.1), էջ 200-269 at 202.

տարում:<sup>226</sup> Իրավարարության էական բաղադրիչներն են՝ 1) մեկ կամ մի քանի վիճելի հարցեր ունեցող պետությունները համաձայնում են վճիռ կայացնելու իրավունքը հանձնել անկողմնակալ և կողմերի նշած եղանակով ստեղծված ատյանին, և համաձայնում են ենթարկվել այդ ատյանի կայացրած վճիռին, 2) լիազորում են ատյանում նշանակված անձին, անձանց կամ պետություններին անցկացնել հետաքննություն և կայացնել վճիռ:<sup>227</sup>

Իրավարարության կանոնները նկարագրված են 1899թ. հուլիսի 29-ին կնքված Միջազգային վեճերի խաղաղ կարգավորման Հաագայի կոնվենցիայում (The Hague Convention for the Pacific Settlement of International Disputes): Դրանք թեթևակի լրամշակվել են 1907թ. հոկտեմբերի 18-ին կնքված նույնանուն կոնվենցիայով (ուժի մեջ է մտել 1910թ. հունվարի 26-ին): «Միջազգային իրավարարություն» հասկացությունն այդ կոնվենցիայում ձևակերպված է որպես «պետությունների միջև գոյություն ունեցող վեճերի կարգավորում՝ սեփական ընտրությամբ նշանակված դատավորների կողմից և օրենքի պահանջների հարգմամբ» (հոդված 15՝ 1899-ի կոնվենցիայում, և հոդված 37՝ 1907-ի կոնվենցիայում):<sup>228</sup>

### 5.3.1 Գործընթացը և գեկույցը

Գլխավոր Դաշնակիցների և ասոցացված տերությունների Փարիզում գործող խորհուրդը 1920թ. ապրիլի 26-ին դիմում է ԱՄՆ նախագահին՝ Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանները ճշգրտող իրավարար վճիռ կայացնելու խնդրանքով:<sup>229</sup> 1920թ. մայիսի 17-ին ԱՄՆ պետքարտուղարը Ֆրանսիայում ԱՄՆ դեսպանին տեղեկացնում է, որ նախագահը համաձայնել է հանդես գալ որպես իրավարար:<sup>230</sup> Հուլիսին ԱՄՆ պետքարտուղարությունը սկսում է խումբ հավաքել այդ հանձնարարությունը կատարելու համար: Խումբը ստանում է «Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանի իրավարար հանձնաժողով» անվանումը: Սահմանների հանձնաժողովը գլխավորում էր պրոֆեսոր Վիլյամ Վեսթերմանը, իսկ հանձնաժողովի հիմնական աշխատակիցներն էին Լոուրենս Մարտինը և Հարիսոն Դուայթը: 1920թ. օգոստոսի 10-ին՝ Սևրի պայմանագրի ստորագրման օրը, հանձնաժողովը սկսում է աշխատանքը:

Հանձնաժողովի գործունեության կարգի համաձայն՝ խումբը, հաշվի առնելով էթնիկ, կրոնական, տնտեսական, աշխարհագրական և ռազմական գործոնները, պետք է գծանշեր Հայաստանի հարավային և արևմտյան սահմանները: Հանձնաժողովին տրամադրվել էին խաղաղության բանակցություններում ԱՄՆ պատվիրակության, ինչպես նաև Հարբորդի առաքելության բոլոր փաստաթղթերը, ԱՄՆ պետքարտուղարության, ռազմական և ներքին գործերի նախարարությունների փաստաթղթերը և ԱՄՆ երկրաբանական գործակալության քարտեզագրության ծառայության նյութերը: Հանձնաժողովը խորհուրդներ էր ստանում պետական ծառայության մեջ գտնվող փորձագետներից, անմիջական կոնսուլտացիաներ անցկացնում գեներալ Հարբորդի հետ: Հանձնաժողովը տեղեկություններ տրամադրելու խնդրանքով դիմել էր նաև միսիոներներին և տեղերում աշխատած այն անձանց, ովքեր կարող էին մանրամասնություններ տրամադրել գյուղերի ազգային կազմի (եթե սահմանն անցնելու լիներ այդ գյուղերի մոտով), գյուղերն ու քաղաքներն

226 See Shabtai Rosenne, *The Law and Practice of the International Court, 1920-1996*, 3<sup>rd</sup> ed. 4 vols., Vol. 1, “The Court and the United Nations” (The Hague, Netherlands: Martinus Nijhoff, 1997), p. 11; Katharine Seide (ed.), *A Dictionary of Arbitration and its Terms: Labor, Commercial, International – A Concise Encyclopedia of Peaceful Dispute Settlement* (Dobbs Ferry, NY, USA: Oceana Publications, 1970), p. 126.

227 Sheldon Amos, *Political and Legal Remedies for War*, (London, UK: Cassell, Petter, Galpin & Co., 1880), էջ 164-165.

228 James Brown Scott (ed.), *The Hague Court Reports* (New York: Oxford University Press, 1916), էջ lvi-lvii.

229 Lt.-Col. Lawrence Martin, “Introduction: The Legal Basis of the New Boundaries,” in Lt.-Col. Lawrence Martin (ed.), *The Treaties of Peace, 1919-1923*, 2 vols., Vol. I (New York, NY, USA: Carnegie Endowment for International Peace, 1924), pp. v-lxxvii at xxxii.

230 Martin (ed.), *The Treaties of Peace*, Vol. I, p.783 (տե՛ս հղում 229).

իրար կապող ճանապարհների, շուկաների և տեղանքի առանձնահատկությունների մասին:

«Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանի իրավարար հանձնաժողովի ամբողջական գեկույցը» պետքարտուղարությանն է ներկայացվում 1920թ. սեպտեմբերի 28-ին:<sup>231</sup> Ջեկույցում նկարագրված էին իրավարարությանը հանձնված տարածքը, հանձնաժողովի օգտագործած աղբյուրները, աշխատանքի ընթացքում կիրառված սկզբունքներն ու հիմքերը, դեպի ծով ազատ ելք ունենալու նպատակով Տրապիզոնն այդ տարածքի մեջ մտցնելու անհրաժեշտությունը, սահմանի ապառազմականացման անհրաժեշտությունը, հայկական պետության բնույթը, Հայաստանի ակնկալվող ֆինանսական վիճակը և Մերձավոր Արևելքում տիրող քաղաքական իրավիճակը: Ջեկույցին կցված էր յոթ հավելված, որոնցում ընդգրկված փաստաթղթերը վերաբերում էին իրավարարությանը, սահմանների գծանշման համար օգտագործված քարտեզներին, Խարբերդի հարցին (Խարբերդը դուրս էր մնացել Հայաստանի տարածքից), Տրապիզոնի հարցին, Թուրքիայի և Պարսկաստանի սահմանի կարգավիճակի հարցին, Հայաստանին առնչվող ռազմական իրավիճակին և Հայաստանին հատկացված Օսմանյան կայսրության նախկին չորս նահանգների ֆինանսական վիճակին:

Հատկապես այդ չորս նահանգների (վիլայեթների) ընտրության հարցում գլխավոր գործոններ էին հանդիսացել տեղանքի աշխարհագրությունը, տնտեսությունը և ազգագրությունը: Պատմական և բարոյական գործոններն այս պարագայում հաշվի չէին առնվել: Հանձնաժողովը փորձել էր այնպես անցկացնել սահմանը, որ տեղի հայերը արևելյան Հայաստանի բնակիչների հետ միասին կազմեին այդ տարածքի ընդհանուր բնակչության մոտ կեսը, իսկ մի քանի տարի անց համարյա բոլոր շրջաններում դառնային բացարձակ մեծամասնություն: Հաշվարկները կատարելիս հաշվի էին առնվել Հայոց Ցեղասպանության հետևանքները, պատերազմի ընթացքում մահմեդականների կորուստները և այն, որ մահմեդական բնակչության մի մասը, օգտվելով Սևրի պայմանագրի դրույթներից, կամավոր կտեղափոխվի կամ Թուրքիայի տիրապետության տակ մնացող տարածքներ, կամ ինքնավար Քրդստան:

Հայաստանի տրվող տարածքը 40 000 քառակուսի մղոն էր (103 599 քառակուսի կիլոմետր), իսկ դա Օսմանյան և ոչ Օսմանյան աղբյուրներում և քարտեզներում դարերից ի վեր «Էրմենիստան» (Հայաստան)<sup>232</sup> անունը կրող տարածքի կեսից էլ պակասն էր (108 000 քառակուսի մղոն կամ 279 718 քառակուսի կիլոմետր), իսկ 1878-ից հետո<sup>233</sup> այդ տարածքներն անվանվում են «Հայաստան», կամ ինչպես Մուդրոսի զինադադարի համաձայնագրում էր՝ «վեց հայկական վիլայեթներ»:<sup>234</sup> Հանձնաժողովը նախապատերազմական վիճակագրության հիման վրա հաշվել էր, որ նոր Հայաստանին հատկացվելիք տարածքներում բնակվում էր 3 570 000 մարդ, որոնցից՝ մահմեդականներ (թուրքեր, քրդեր, «թաթար» աղբյուրները և այլոք) 49 տոկոս, հայեր՝ 40 տոկոս, լազեր՝ 5 տոկոս, հույներ՝ 4 տոկոս և այլ՝ 1 տոկոս: Ակնկալվում էր, որ նորաստեղծ անկախ Հա-

231 Ամբողջական գեկույցը և հարակից փաստաթղթերը տես՝ U.S. Archives, General Records of the Department of State (Decimal File, 1910-1920), RG 59, RG 59, 760J.6715/65.

232 Պատմական պատկանելիության (պատմական տիրողուսի, սեփականության իրավունքի) հասկացությունը լայնորեն հայտնի է միջազգային իրավունքում: Պատմական տիրողուսն այն տիրողուսն է, որը բավական երկար ժամանակ ընկալվում է ընդհանրության կողմից և ինքնին արդեն հանդիսանում է բավարար իրավաբանական տիրողուս (սեփականության իրավունք)

233 Stu' Article 16 of the Preliminary Treaty of Peace between Russia and Turkey, Signed at San Stefano, March 3, 1878, published in *The American Journal of International Law* 2:4, Supplement (1908): 387-401, <http://www.jstor.org/stable/2212669?origin=JSTOR-pdf> (accessed October 18, 2014). Stu' սուս M. G. Rolin-Jaequemyns, *Armenia, the Armenians, and Treaties*, M. G. Rolin-Jaequemyns (trans.) (London, UK: John Heywood, 1891).

234 J.C. Hurewitz, *Diplomacy in the Near and Middle East*, 2 vols. Vol. 2, "A Documentary Record: 1914-1956" (Princeton, NJ, USA: D. Van Nostrand Company, 1956), p. 37.

յաստան են վերադառնալու բազմաթիվ հայ գաղթականներ: Իսկ հայրենադարձումից մեկ տարի անց Հայաստանի Հանրապետության բնակչության թիվը դառնալու էր մոտ 3 միլիոն, որի 50 տոկոսը կլինեին հայեր, 40 տոկոսը՝ մահմեդականներ, 6 տոկոսը՝ լազեր, 3 տոկոսը՝ հույներ, 1 տոկոսը՝ այլ ազգեր:

Ակնկալվում էր, որ հետագա տարիներին հայերի բացարձակ և հարաբերական թվերն անշեղորեն և արագորեն աճելու են:<sup>235</sup> Կանխատեսվում էր, որ Հատուկ հանձնաժողովի առաջարկած սահմանների գծանշումից 20 տարի անց հայերն այդ տարածքներում կազմելու են բնակչության 75 տոկոսը:

1920թ. նոյեմբերի 22-ին<sup>236</sup> Վուդրո Վիլսոնը ստորագրում է վերջնական զեկույցը, որը վերնագրված էր «Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահի որոշումը Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանների, Հայաստանին դեպի ծով ելք տալու և Հայաստանին հարակից թուրքական տարածքների ապառազմականացման վերաբերյալ»:<sup>237</sup> 1920թ. նոյեմբերի 24-ին իրավարար վճռի տեքստը հեռագրով ուղարկվում է Փարիզ, դեսպան Ուոլասին՝ հանձնարարելով նրան այն հանձնել Փարիզի խաղաղության կոնֆերանսի գլխավոր քարտուղարին, որն էլ իր հերթին այն պիտի փոխանցեր Գլխավոր հորհրդին:<sup>238</sup> Ուոլասը 1920թ. դեկտեմբերի 7-ին պատասխանում է, որ առավոտյան ինքը հանձնել է տեքստը: Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանը վերջնականապես կարգավորված էր, թուրք-հայկական միջպետական սահմանը՝ որոշված:<sup>239</sup> Ինչպես հստակորեն ամրագրված է Հաագայի կոնվենցիայում<sup>240</sup> (1899-ի տարբերակում՝ հոդված 54, 1907-ի տարբերակում՝ հոդված 81)<sup>241</sup> «Վեճը համարվում է վերջնականապես և առանց բողոքարկման իրավունքի կարգավորված [ավարտված], եթե վճիռը պատշաճ կերպով ներկայացվել և ծանուցվել է կողմերի ներկայացուցիչներին»:<sup>242</sup>

### 5.3.2 Իրավարար վճռի վավերականությունը

Որպեսզի իրավարար վճիռը վավերական լինի, այն պետք է համապատասխանի որոշակի չափանիշների. 1) իրավարար(ներ)ը չպետք է ենթարկված լինեն որևէ արտաքին ազդեցության՝ ճնշման, կաշառքի կամ կոռուպցիայի, 2) ապացույցները չպետք է կեղծված լինեն և ունենան էական սխալներ, 3) խնդրագիրը պետք է իրավաբանական ուժ ունենա, 4) իրավարարները չպետք է գերազանցած լինեն իրենց լիազորությունները:<sup>243</sup>

235 Նույն տեղում, էջ 31; G. H. Hackworth, *Digest of International Law*, 8 vols, Vol. I (Washington, DC, USA: Government Printing Office, 1940), p. 715.

236 A. O. Cukwurah, *The Settlement of Boundary Disputes in International Law* (Manchester, UK: Manchester University Press, 1967), pp.165-166.

237 Նույն տեղում. էջ 31; G. H. Hackworth, *Digest of International Law*, 8 vols., Vol. I (Washington, DC, USA: Government Printing Office, 1940), էջ 715.

238 Նույն տեղում. էջ 789-790

239 Cukwurah, *The Settlement of Boundary Disputes*, p. 31 (see Note 236); Hackworth, *Digest of International Law*, Vol. I, p. 715 (see Note 237).

240 The 1899 Convention was ratified by Turkey on July 12, 1907. See Scott (ed.), *The Hague Court Reports*, p. cii (տես հղում 228).

241 Այս հասկացությունը 1899-ի կոնվենցիայի 54-րդ հոդվածում մի փոքր այլ ձևակերպում ունի. «Վճիռը, կողմերի ներկայացուցիչներին պատշաճ կերպով հայտարարելուց ու ծանուցելուց հետո վերջ է դնում վեճին որոշակիորեն և առանց բողոքարկման իրավունքի»

242 Նույն տեղում

243 Isaac Paenson, *Manual of the Terminology of Public International Law (Law of Peace) and International Organizations: English/French/Spanish/Russian* (Brussels, Belgium: Bruylant, 1983), pp.588-590.

Չափանիշ 1-ին – Իրավարարը ԱՄՆ նախագահ Վիլսոնն էր: Գոյություն չունի որևէ ապացույց կամ չնչին ակնարկ, որ նա իր իրավարար դերն իրականացնելու ընթացքում ենթարկվել է ճնշման, կաշառքի կամ կոռուպցիայի:

Չափանիշ 2-րդ - Սահմանի փաստացի որոշման գործընթացն իրականացնում էր վերոնշյալ հատուկ հանձնաժողովը: Հանձնաժողովի նախագահը Վիլյամ Լին Վեսթերմանն էր, որն այդ ժամանակ Վիսքոնսինի Համալսարանի պրոֆեսոր էր, այնուհետև, մինչև 1984-ը, Կոլումբիայի համալսարանի պրոֆեսոր: Վեսթերմանը Մերձավոր և Միջին Արևելքի պատմության և քաղաքականության մասնագետ էր: 1919-ին նա ղեկավարում էր Փարիզում ընթացող խաղաղության բանակցությունների հանձնաժողովի Արևմտյան Ասիայի բաժինը:<sup>244</sup> Գլխավոր աշխատակիցներն էին՝ ԱՄՆ Բանակի Գլխավոր շտաբի անդամ, մայոր (և պրոֆեսոր) Լոուրենս Մարտինը, որը որպես աշխարհագրագետ մասնակցել էր Հարբորդի առաքելությանը, և ԱՄՆ Պետքարտուղարության Մերձավոր Արևելքի բաժնի աշխատակից Հարիսոն Դուայթը:<sup>245</sup> Հանձնաժողովի բոլոր անդամները գիտակ, փորձառու և անկողմնակալ փորձագետներ էին: Առ այսօր միջազգային իրավաբանները շատ բարձր են գնահատում նրանց կատարած աշխատանքը, որը մնում է որպես նմանատիպ գործընթացների համար օրինակելի մոդել: Օրինակ՝ Յահուդա Զ. Բլումը նշում է .

«Այս վճիռը պետք է գնահատվի որպես միջպետական սահմանները որոշելու և հարաբերությունների հարցում տարբեր գործոնները հաշվի առնելու ամենաարժեքավոր վերլուծություններից մեկը»:<sup>246</sup>

Իսկ Ա. Լ. Վ. Մանքմանը համարում է, որ

«մեծ ուշադրության է արժանի Նախագահ Վիլսոնի՝ Հայաստանի նորաստեղծ պետության սահմանները որոշելու գործընթացը, քանի որ դրանում ներկայացված էին կարևորագույն հիմնավորումները, որոնք էին՝ «բնական սահմանի» և «նոր պետության աշխարհագրական ու տնտեսական միասնության» անհրաժեշտությունը, բնակչության ազգային և կրոնական գործոնները, անվտանգությունը, ինչպես նաև դեպի ծով ելք ունենալու հարցը»:<sup>247</sup>

Հավելենք, որ գեկույցը նաև ուսումնասիրվել էր ԱՄՆ պետքարտուղարությունում և Ռազմական նախարարությունում, որոնք, անկասկած, կհայտնաբերեին ցանկացած կեղծիքի և կոռուպցիայի դրսևորում, եթե այդպիսիք լինեին:

Չափանիշ 3-րդ – Կան մի շարք գործոններն, որոնք հաստատում են իրավարարության խնդրագրի վավերականությունը:

1) Կար իրավարար գործընթաց սկսելու վերաբերյալ կողմերի համաձայնությունը: Նման համաձայնությունն ամրագրվում է պայմանագրի մեջ իրավարարության մասին հատուկ դրույթ նե-

244 Hovannisian, *The Republic of Armenia*, Vol. IV, p. 30 (տես հղում 67).

245 Նույն տեղում

246 Yehuda Zvi Blum, *Secure Boundaries and Middle East Peace, in Light of International Law and Practice*, “Institute for Legislative Research and Comparative Law Publications” book series, Vol. 21 (Jerusalem, Israel: Hebrew University of Jerusalem, Faculty of Law, Institute for Legislative Research and Comparative Law, 1971), էջ 26.

247 A. L. W. Munkman, “Adjudication and Adjustment – International Judicial Decision and the Settlement of Territorial and Boundary Disputes,” in Malcolm N. Shaw (ed.), *Title to Territory*, “The Library of Essays in International Law” book series, Vol. 8 (Burlington, VT, USA: Ashgate/Dartmouth, 2005), էջ 133-248 at 139, n. 4.

րառելով, առ այն, որ կողմերի միջև պայմանագրի կատարման կապակցությամբ ծագող վեճը պետք է լուծվի իրավարար գործընթացով:<sup>248</sup> Այն, որ Սևրի պայմանագրում ներառվել էր հատուկ դրույթ (հոդված 89), որը նախատեսում էր իրավարարության գործընթաց, ապացուցում է, որ գոյություն ունեին Հայաստանի և Թուրքիայի, ինչպես նաև Պայմանավորվող Բարձր Կողմերի համաձայնությունը: Ըստ այդ հոդվածի՝

«Թուրքիան և Հայաստանը, ինչպես նաև մյուս Պայմանավորվող Բարձր Կողմերը, համաձայնում են Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահի իրավարարությանը հանձնել Թուրքիայի և Հայաստանի միջև Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի վիլայեթներով անցնելիք սահմանների հացը, և պարտավորվում են ճանաչել նրա կայացրած որոշումը, ինչպես նաև ճանաչել նրա կայացնելիք այլ որոշումները, որոնք կվերաբերեն Հայաստանի՝ դեպի ծով ելք ունենալուն և նշված սահմաններին հարակից տարածքների ապառազմականացմանը Թուրքիայի կողմից»:

2) Իրավարարության խնդրագրի շուրջ ընթացել էին պատշաճ բանակցություններ: Թուրքիայի պատվիրակությունը 1920թ. մայիսի 11-ին Փարիզի խաղաղության կոնֆերանսում պաշտոնապես ստացել էր Սևրի պայմանագրի նախագիծը,<sup>249</sup> իսկ պայմանագրի վերաբերյալ իր նկատառումները կամ առարկությունները գրավոր ներկայացնելու համար թուրքական կառավարությանը տրվել էր մեկ ամիս:<sup>250</sup> Պատվիրակության ղեկավար Թեֆիկ փաշան պաշտոնապես հաստատել էր պայմանագրի ստացումը և նշել, որ այն կարժանանա իր կառավարության ազնիվ և շուտափույթ ուշադրությանը:<sup>251</sup> Մայիսի վերջին Թուրքիայի մեծ վեզիր Դամադ Ֆերիդը դիմում է Գլխավոր Խորհրդին՝ խնդրելով նկատառումները ներկայացնելու ժամկետը երկարացնել ևս մեկ ամսով: Փարիզի խաղաղության կոնֆերանսի Գլխավոր Խորհուրդը, փոխգլխման գնալով, տալիս է երկու շաբաթ՝ մինչև 1920թ. հունիսի 25-ը:<sup>252</sup> Թուրքիան այդ օրը ներկայացնում է իր առաջին նկատառումները՝ ստորագրված Դամադ Ֆերիդ փաշայի կողմից, իսկ հուլիսի 7-ին՝ երկրորդ հուշագիրը, ինչից հետո Գերագույն Խորհուրդը լիազորում է պայմանագրի նախագիծը կազմող հանձնաժողովին՝ պայմանագրի ձևակերպումներում կատարել ոչ էական փոփոխություններ:<sup>253</sup> Գերագույն Խորհուրդը նաև պնդում է, որ սահմանների հարցը պետք է որոշվի իրավարարության գործընթացով, և որ պետք է ստեղծվի «ազատ Հայաստան այնպիսի սահմաններով, որպիսիք ԱՄՆ նախագահը կհամարի արդարացի»:<sup>254</sup> Դաշնակիցների պատասխանը հանձնվում է թուրքական պատվիրակությանը 1920թ. հուլիսի 17-ին:

3) Իրավարարության խնդրագիրը ստորագրել էին օրինական կառավարության կողմից լիազորված ներկայացուցիչները: 1918-1922 թթ.-ին Օսմանյան կայսրության ղեկավարն էր Սուլթան-

248 Paenson, *Manual of the Terminology of Public International Law*, p.586 (տե՛ս հղում 243).

249 Herbert Adams Gibbons, *An Introduction to World Politics* (New York, NY, USA: The Century Co., 1922), էջ 430.

250 Helmreich, *From Paris to Sèvres*, p. 309 (տե՛ս հղում 207).

251 The Earl of Derby (Paris) to Earl Curzon, received May 12, 1920, FO E4614/56/44/Tel.568, Document No. 61 in Rohan Butler and J. P. T. Bury (eds.), *Documents on British Foreign Policy 1919-1939*, First Series, Vol. 13 (London, UK: Her Majesty's Stationary Office, 1963), էջ 70.

252 Earl Curzon to Sir Buchanan (Rome), June 26, 1920, FO E 5506/3/44/Tel.236, Document No. 72, Note 2, in Rohan Butler and J. P. T. Bury (eds.), *Documents on British Foreign Policy 1919-1939*, First Series, Vol. 13 (London, UK: Her Majesty's Stationary Office, 1963), էջ 79.

253 British Secretary's Notes of an Inter-Allied Conference held at the Villa Fraineuse, Spa, on Sunday, July 11, 1920, at 11:30 a.m., Appendix I, Draft Reply to Turkey, ICP 131, in Document No. 62, Appendix I, in Rohan Butler and J. P. T. Bury (eds.), *Documents on British Foreign Policy 1919-1939*, First Series, Vol. 8 (London, UK: Her Majesty's Stationary Office, 1958), էջ 553-556.

254 Նույն տեղում, էջ 554

խալիֆ Մահմեդ VI-ը (կամ Վահիդուդ-դին Էֆենդի, Վահիդեդդին), և նա էր ճանաչվում որպես կայսրության քաղաքական ղեկավարություն:<sup>255</sup> Հենց սուլթանն էր ներկայացնում Օսմանյան կայսրության դե յուրե կառավարությունը:<sup>256</sup> Օսմանյան կայսրության սահմանադրության (1876թ. դեկտեմբերի 23, 1908թ. հուլիսի 23) 3-րդ հոդվածի համաձայն՝ «Օսմանյան կայսրությունում իշխանությունը... պատկանում է Օսմանյան տոհմի ավագագույն իշխանին», և միայն սուլթանն ունի օրենսդրական նախաձեռնության իրավունք:<sup>257</sup> Համաձայն սահմանադրության 7-րդ հոդվածի՝ սուլթանին էր վերապահված պայմանագրեր կնքելու իրավունքը: 1920թ. հուլիսի 22-ին սուլթան Մահմեդ VI-ը, որն ըստ սահմանադրության հանդիսանում էր երկրի ղեկավարը, ստեղծում է 50 հանրահայտ քաղաքական և ռազմական գործիչներից կազմված Արքայական խորհուրդ: Այդ խորհրդի մեջ ընդգրկված էին նախկին նախարարներ, պատգամավորներ և գեներալներ: Նրանց թվում էր նաև վարչապետ Դամադ Ֆերիդ փաշան: Այդ խորհուրդը հավանություն էր տվել Սևրի պայմանագիրը կնքելուն: Պայմանագիրը ճանաչվեց:<sup>258</sup> Իսկ պայմանագրի վերջնական տեքստը, որը ներառում էր իրավարարության դրույթը (հոդված 89), ստորագրել էին Թուրքիայի լիազոր ներկայացուցիչները (պատգամավոր գեներալ Հասդի փաշան, պատգամավոր Ռզա Թեֆիկը և Բեռնում Թուրքիայի արտակարգ և լիազոր դեսպան Ռեջադ Հալիս բեյը), որոնք էլ այն ներկայացրել էին Դամադ Ֆերիդ փաշայի կառավարության անունից:<sup>259</sup>

Չափանիշ 4-րդ - Խնդրագիրը դիմում էր իրավարարին՝ 1) ամրագրել Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանը Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի վիլայեթներում, 2) Հայաստանին տրամադրել ելք դեպի ծով, 3) մշակել թուրք-հայկական սահմանին հարակից շրջանների ապառազմականացման դրույթները: Ինչպես երևում է Հայաստանին հատկացված տարածքից՝ նախագահ Վիլսոնը ճշտորեն ենթարկվել էր նշված պահանջներին, և սա այն դեպքում, երբ միսիոներական խմբերը ուժեղ ճնշում էին գործադրում նրա վրա՝ Խարբերդն ու նրա շրջակա տարածքը Հայաստանի Հանրապետությանը միացնելու համար:

### 5.3.3 Իրավարար վճիռի վավերականության լրացուցիչ նկատառումներ

Ինչպես արդեն ասվեց, Սևրի պայմանագիրը հանձնարարում էր նախագահ Վիլսոնին իրավարար վճիռ կայացնել սահմանների վերաբերյալ: Իրավարարության վերաբերյալ պայմանավորվածություն ձեռք բերելուց և իրավարարությունը պատշաճորեն ավարտելուց հետո, այն արդեն հանդիսանում է վերջնական՝ անկախ պայմանագրի հետագա ճակատագրից: Համաձայն *Res Judicata* (վճիռների վերջնական բնույթը) իրավաբանական դոկտրինի՝ եթե հայցի կապակցությամբ կայացվել է վերջնական վճիռ, ապա այդ հայցն այլևս ենթակա չէ նոր դատական գործընթացի:<sup>260</sup> *Res Judicata* դոկտրինը գործում է բոլոր իրավարար վճիռների պարագայում՝ անկախ պայմանագրում դրան վերաբերող դրույթի առկայությանը կամ բացակայությանը: Բացի այդ, իրավարար վճիռներն ունեն նույն բնույթը, ինչ դատավճիռները, քանի որ երկուսի հիմքում էլ

255 Arnold J. Toynbee and Kenneth P. Kirkwood, *Turkey* (New York, NY, USA: Charles Scribner's Sons, 1927), էջ 151.

256 Harold Armstrong, *Turkey in Travail: The Birth of a New Nation* (London, UK: John Lane, 1925), էջ 113.

257 Lord G. Shaw-Lefevre Eversley, *The Turkish Empire From 1288 to 1914 and From 1914 to 1924*, Abridged ed., Sir Valentine Chirol (ed.), (Lahore, Pakistan: Sheikh Abdur Rashid, 1958), էջ 295.

258 Salahi Ramsdan Sonyel, *Turkish Diplomacy 1918-1923: Mustafa Kemal and the Turkish National Movement*, "Sage Studies in 20<sup>th</sup> Century Security" book series, Vol. 3 (London, UK: Sage Publications, 1975), էջ 82.

259 Toynbee and Kirkwood, *Turkey*, էջ 76 (տես հղում 255); Elaine Diana Smith, "Origins of the Kemalist Movement and the Government of the Grand National Assembly (1919-1923)," doctoral dissertation, American University, Washington, DC, USA, 1959, էջ 133.

260 Նույն տեղում

օրենքն է:<sup>261</sup> Դրանք երկուսն էլ իրավական որոշումներ են: Հետևաբար թե՛ իրավաբար վճիռների, և թե՛ դատական գործերի պարագայում գործում է collateral estoppel դոկտրինը, ըստ որի՝ որևէ հարցի կապակցությամբ պատշաճ իրավական վճիռ կայացնելուց հետո այն այլևս ենթակա չէ վերաբացման կամ հետագա դատավարություններում քննման:<sup>262</sup>

Եթե իրավաբարության գործընթացի կողմերից մեկը ողջամիտ ժամկետում չի ձեռնարկում վճիռը վիճարկելուն ուղղված որևէ գործողություն, դա ընկալվում է որպես լռելյայն համաձայնություն, իսկ դրանից հետո վճիռը համարվում է վավերական և պարտադիր:<sup>263</sup> Թուրքիան երբևէ չի վիճարկել Վիլսոնի իրավաբար վճիռի օրինականությունը, չի կատարել վճիռը բեկանելուն ուղղված որևէ գործողություն, և հետևաբար տվել է իր «լռելյայն համաձայնությունը»: Իսկ այն, որ Թուրքիան բռնազավթել է իրավաբար վճռով նախատեսված տարածքների մի մասը, չի կարող վճռի իրավական վիճարկում համարվել: Այդ բռնազավթումն, ավելի շուտ, իրավաբար վճռի ոտնահարում է: Իրավաբար որոշումները կողմերի համար պարտադիր են անժամկետ:<sup>264</sup> Իրավաբար վճիռն չի կորցնում վավերականությունը, նույնիսկ եթե այն չի իրագործվել:

ԱՄՆ նախագահի պաշտոնն ունի ներկայացուցչական բնույթ:<sup>265</sup> Սա նաև նշանակում է, որ նախագահի բոլոր պաշտոնական հայտարարություններն ունեն միջազգային ծանուցման արժեք:<sup>266</sup> Նախագահի՝ իր լիազորությունների շրջանակներում կայացրած որոշումները, հանդիսանում են ԱՄՆ կառավարության վերջնական դիրքորոշումը: Այս իրավաբար վճիռն ԱՄՆ-ի համար ունի պարտադիր ուժ,<sup>267</sup> որովհետև այն կայացնողը զբաղեցնում էր ԱՄՆ նախագահի պաշտոնը:

Եվ վերջապես, իրավաբար վճիռները կարող են չեղյալ հայտարարվել միայն այն դեպքում, եթե հեղինակավոր հանրային կամ դատական մարմինները հաստատում են, որ կան վճիռը չեղյալ հայտարարելու հիմքեր:<sup>268</sup> Նման հայտարարություն կարող է անել որևէ միջազգային կառույց, օրինակ՝ Արդարադատության միջազգային դատարանը: Կամ էլ դա կարող է տեղի ունենալ միջազգային հանրային կարծիքի հիման վրա: Կողմերից մեկի հրաժարումը դեռևս բավարար չէ վճիռը չեղարկելու համար: Ելնելով 1907թ. Հաագայի կոնվենցիայի 81-րդ հոդվածից և այն հանգամանքից, որ չկա իրավաբար վճիռները չեղարկելու իրավասությամբ օժտված որևէ միջազգային կառույց, ոչ մի կողմ չի կարող օրենքի սահմաններում վիճարկել գործող իրավաբար վճիռը:<sup>269</sup>

### 5.3.4 Վճռի հետևանքները տարածքի այսօրվա կարգավիճակի համար

Նախագահ Վիլսոնի իրավաբար վճռի վավերականությունից հետևում է, որ Թուրքիայի կողմից «Վիլսոնյան Հայաստանի» օկուպացիան հանդիսանում է միջազգային պարտավորության

261 Max Sørensen (ed.), *Manual of Public International Law* (New York, NY, USA: St. Martin's Press, 1968), էջ 584.

262 (ed.), *A Dictionary of Arbitration and Its Terms*, էջ 49 (տես հղում 226).

263 Sørensen (ed.), *Manual of Public International Law*, էջ 694 (տես հղում 261).

264 LuziusWildhaber, *Treaty-Making Power and Constitution: An International and Comparative Study*, “Schriftenreihe des Instituts für Internationales Recht und Internationale Beziehungen” book series, Vol. 16 (Basel, Germany: Helbing and Lichtenhahn, 1971), էջ 98.

265 Quincy Wright, *The Control of American Foreign Relations* (New York, NY, USA: MacMillan, 1922), էջ 36.

266 Նույն տեղում, էջ 37

267 Նույն տեղում, էջ 38

268 Seide (ed.), *A Dictionary of Arbitration and Its Terms*, էջ 15 (տես հղում 226).

269 Sørensen (ed.), *Manual of Public International Law*, էջ 693-94 (տես հղում 261).



խախտում, հետևաբար կարելի է դիմել իրավական քայլերի, օրինակ՝ դիմել Արդարադատության միջազգային դատարան (ԱՄԴ)՝ այդ կառույցի կանոնադրության 36 (2) հոդվածին համապատասխան: Այդ հոդվածը դատարանին իրավունք է վերապահում քննելու «միջազգային պարտավորության խախտման հետևանքով առաջացած հատուցման հայցերը և դրանց բնույթը»: Անկախ այն հանգամանքից, որ իրավարար վճռով Հայաստանին հատկացված տարածքը Թուրքիայի տիրապետության տակ է գտնվում արդեն երկար ժամանակ, Թուրքիան, մինչև այժմ է, չունի այդ տարածքի նկատմամբ սեփականության իրավունք (legal title): Բռնազավթումը չի առաջացնում տարածքի նկատմամբ օրինական իրավունք: Օրինականության բնույթի վրա չեն ազդում նաև 1920-ից ի վեր այդ տարածքին շարունակաբար տիրելու, դրա ժողովրդագրությունը բռնի կամ ոչ բռնի փոփոխելու, կամ էլ մշակության արժեքները ձևափոխելու հանգամանքները: Միջազգային իրավունքի նորմերը, ինչպես նաև բռնի ուժի դեմ միջազգային արգելքը վերահաստատելու նպատակով անհրաժեշտ է վերացնել այն իրավիճակը, որն առաջացել է իրավարար վճռին Թուրքիայի չենթարկվելով և նախկինում իրեն չպատկանած տարածքի բռնազավթումով: Կրկնենք, որ օրենքների գլխավոր սկզբունք հանդիսացող *ex injuria non oritur jus* նորմը նշանակում է, որ ապօրինի գործողություն կատարած պետությունն իրավունք չունի շարունակել իր ապօրինության պտուղները քաղել, և որ այս ապօրինությունը թուրքական պետությանն ու նրա հպատակներին նոր իրավունքներ չի տալիս:

Մրանով պատասխան է տրվում նաև զեկույցի այս մասի սկզբում տրված հարցին. «Վիլսոնյան Հայաստանը» Հայաստանի Հանրապետությանը հանձնելը, ինչպես էլ դա դիտարկվի՝ բուն իրավարար վճռի կատարում, թե վնասների շտկում, հանդիսանում է Հայոց ցեղասպանության առաջին փուլի հատուցման գործընթացի իրավականորեն հիմնավորված և կարևորագույն բաղադրիչը: Սա հստակորեն երևում է Փարիզի խաղաղության կոնֆերանսի Գլխավոր Խորհրդի՝ թուրքական կառավարությանն ուղղված 1920թ. հուլիսի 17-ի պատասխանում, որտեղ ընդգծվում էր իրավարար գործընթացի անհրաժեշտությունը.

«[նախկին] քսան տարվա ընթացքում հայերը ենթարկվել են անօրինակ բարբարոսությամբ իրականացված կոտորածների, իսկ պատերազմի ընթացքում թուրքական կառավարության կատարած կոտորածները, տեղահանությունները և գերիների նկատմամբ անհավոր վերաբերմունքն անհամեմատ գերազանցեցին նախկին արարքները... Թուրքական կառավարությունը ոչ միայն չպաշտպանեց իր այլազգի հպատակներին թալանից և սպանություններից, այլև գոյություն ունեն մեծաքանակ ապացույցներ, որ հենց ինքն է պատասխանատու այն վայրենությունների համար, որ իրականացվում էին այն անձանց նկատմամբ, որոնց պարտավոր էր պաշտպանել»:<sup>270</sup>

Եզրակացությունն այն էր, որ Թուրքիայի տիրապետության տակ մնալու պարագայում այդ տարածքներում չէր ապահովվելու հայերի անվտանգությունը և նրանց նկատմամբ արդարացի վերաբերմունքը: «Վիլսոնյան Հայաստանը» Հայաստանին հանձնելը պիտի դառնար հայ ժողովրդի վերականգնման և ապագա կենսունակության գրավականը: Ինչպես նշվում է զեկույց հետագա բաժիններում, հաշվի առնելով, որ Ցեղասպանության հետևանքները դեռևս չեն վերացվել, և որ Թուրքիան ժամանակին խոչընդոտել է հատուցումների նախնական գործընթացը, ակնհայտ է, որ տարածքների հարցն այսօր ավելի է կարևորվում՝ մնալով հատուցումների կարևորագույն բաղադրիչներից մեկը:

270 Թուրքիային ուղարկված պատասխանի նախագիծը (տես հղում 253).

Վերջում նշենք, որ Սևրի և Լոզանի պայմանագրերի մյուս մեկնաբանությունները բավարար հիմք չեն հանդիսանում Հայոց ցեղասպանության հետևանքով առաջացած ստատուս քվոյի պահպանման համար: Զեկույցում բերված հիմնավորումները շատ ավելի ուժեղ են, քան նույնիսկ այն հիմնավորումները, որոնց հիմքում ընկած են զեկույցի նախորդ հատվածում հիշատակված միջազգային իրավունքի նորմերը: Այդ պայմանագրերի շուրջ առկա հակադիր տեսակետներից բխող անորոշությունը դեռևս չի նշանակում, թե այդ պայմանագրերը կարելի է այնպես մեկնաբանել, որ արդարացվեն սահմանների փոփոխությունները: Զեկույցում բերվող փաստարկները ցույց են տալիս, որ քանի որ Սևրի և Լոզանի պայմանագրերը և դրանց մեկնաբանություններն իրար հակասում են, ապա իրավիճակը համարվում է չլուծված, հետևաբար ոչ միայն հնարավոր է, այլև անհրաժեշտ է նախաձեռնել տարածքային հատուցման հարցի վերաբերյալ իրավական կամ քաղաքական գործընթաց:<sup>271</sup>

Պետք է նաև նշել, որ իրավական պարտադիր ուժ ունեցող միջազգային գործիքի՝ նախագահ Վիլսոնի իրավարար վճռի առկայությունը հայոց պահանջատիրությանը հաղորդում է հատուկ ուժ, քանի որ ցեղասպանության և այլ զանգվածային խախտումների ժամանակակից դեպքերում դա տարածված երևույթ չէ, և սա պետք է հասկանալ երկու ձևով: Նախ՝ վճիռը կարող է դիտարկվել որպես հատուցումների փաթեթի կենտրոնական բաղադրիչը՝ մշակված միջազգային հանրության ներկայացուցիչների կողմից Հայոց ցեղասպանության առաջին փուլից հետո: Եթե Հայոց ցեղասպանության հատուցումները համարվում են հիմնավորված, ապա նախկինում որոշված հատուցումների փաթեթը, որում ներառված է իրավարար վճիռը, պետք է համարվի ողջամիտ: Երկրորդ՝ վճիռը ներկայումս իրագործելը կարող է դիտարկվել որպես թուրք ազգայնամուլների հասցրած վնասի շտկում, այն վնասի, որ նրանք հասցրել են վճռի կայացումը տապալելու և Հայաստանին հատկացված տարածքը բռնազավթելու ձևով: Այս իմաստով վճռի իրագործումը հանդիսանում է Թուրքիայի կողմից պարտադիր ուժ ունեցող պարտավորության խախտման համար հատուցում, իսկ այդ խախտումը հանդիսանում է ազգայնամուլների կողմից մինչև 1923-ը կատարած Հայոց ցեղասպանության երկրորդ փուլի մաս:<sup>272</sup>

271 Մրա վկայությունը թերևս Հայաստանի և Թուրքիայի միջև ներկայիս սահմանների հաստատման մասին դրույթն է 2009թ. Ցյուրիխում երկու պետությունների միջև կնքված դիվանագիտական արձանագրություններում (տես հղում 17): Այն, որ Թուրքիան պահանջում է արձանագրություններում ընդգրկել նման դրույթ, ցույց է տալիս, որ Հայաստանի տարածքային պահանջների հարցը փաստորեն պայմանագրերով և միջազգային իրավունքով վերջնականապես Թուրքիայի օգտին լուծված չէ, և այդ տարածքի նկատմամբ Հայաստանը կարող է օրինական հավակնության հարց բարձրացնել: Ո՛չ Հայաստանը, ո՛չ Թուրքիան արձանագրությունները չեն վավերացրել:

272 Երկրորդը համընկնում է Ջանա Թոմպսոնի մոտեցմանը, ըստ որի՝ պաշտոնական պարտավորության խախտումը հիմք է հանդիսանում հատուցումներ տալու «սերունդների պատասխանատվության» համար (Thompson, *Taking Responsibility for the Past*, էջ 27-30, 36, 71-77 [տես հղում 201]):